

ՌՈՒՍԱՑ ԼԵՁՈՒՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ Ռուսաստանում ստեղծված նոր, սոցիալիստական հասարակարգը մեծ ու փայլուն հեռանկարներ բացեց ցարիզմի կողմից հալածված ժողովուրդների ու ազգերի լեզուների զարգացման ու բարգավաճման համար: ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնող բոլոր ազգերն ու ժողովուրդները միասնաբար լծվելով սոցիալիզմի կառուցման վեհ գործին, լայն հնարավորություններ ստացան զարգացնելու իրենց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, իրենց լեզուն, իրենց գիրն ու գրականությունը: Սոցիալիզմի դարաշրջանում, քանի որ նրանք իրար հետ եղբայրական դաշն են կնքում և հավասար իրավունքներ ձեռք բերում, տնտեսական-հասարակական, մշակութային ավելի սերտ կապերի ու փոխհարաբերությունների մեջ են մտնում, միատեսակ շահեր հետապնդում և պայքարում մի ընդհանուր նպատակի համար, մեծապես փոխվում ու նոր որակ է ստանում ռուսերենի ազդեցությունը այլ լեզուների վրա: Բավականաչափ ընդարձակելով իր ազդեցությունը սահմանները՝ ռուսաց լեզուն դառնում է իսկապես «ՍՍՀՄ ժողովուրդների լեզուների զարգացման ու հարստացման կարևորագույն միջոցը և հիմնական աղբյուրներից մեկը»¹: Հստ որում, ռուսերենից օգտվում են, իհարկե, ոչ միայն նոր զարգացող, գիր ու գրականություն նոր ձեռք բերած, այլև այն ժողովուրդների լեզուները, որոնք բազմադարյան գիր ու գրականություն ունեն և իրենց գրական հուշարձաններով ու մշակույթով առանձնահատուկ տեղ են գրավում մարդկության մշակույթի պատմության մեջ:

Հասկանալի է, որ ո՛չ նախասովետական և ո՛չ էլ սովետական շրջանում ռուսերենի ազդեցությունից չէր կարող դուրս մնալ և դուրս չի մնացել նաև ռուս մեծ ժողովրդի հետ իր գոյության բախտը կապած հայ ժողովրդի լեզուն՝ հայերենը: Եվ միանգամայն իրավացի են լեզվաբաններ Յու. Դեշերիևը և Ի. Պրոտչենկոն, երբ ասում են. «Նիստ զարգացած հնագիր հայոց լեզուն ավելի է զարգանում, լայնորեն օգտագործելով իր ներքին հնարավորությունները և պատմական ավանդույթները: Դրա հետ մեկտեղ նա հարստանում է նաև ռուսաց լեզվի հաշվին, որից փոխ է առնում»² այնպիսի բառեր, որոնք «արտացոլում են սովետական իրականությունը, գիտություն, տեխնիկայի և արվեստի բուռն զարգացումը»³:

Այսպիսով, ինչպես ՍՍՀՄ-ի ժողովուրդների մյուս լեզուների, այնպես էլ հայոց լեզվի համար ռուսաց լեզուն ամենից առաջ բառապաշարի հարստաց-

¹ Ю. Д. Дешериев, И. В. Протченко, Развитие языков народов СССР в советскую эпоху, М., стр. 211.

² Նույն տեղում, էջ 40:

³ Նույն տեղում, էջ 63:

ման ու զարգացման իրո՞ք շատ կարևոր աղբյուր է։ Բազմաթիվ իրողություններ մի կողմ թողնելով, ասենք, որ հապավման բառակազմական եղանակով հատկապես այն մեծ նպաստ է բերել ոչ միայն ՍՍՀՄ-ի, այլև արտասահմանյան շատ ժողովուրդների լեզուներին։ «Ժամանակակից ռուսաց լեզվում,— գրում է Վ. Վինոգրադովը,— հաստատուն տեղ են գտել բառակազմության որակապես նոր տեսակներ, ինչպես՝ հապավումների և բարդ հապավյալ բառերի տեսակը (тип сокращенных и сложносокращенных слов) — нарком (= ժողկոմ), колхоз (= կոլտնտեսություն), местком (= տեղկոմ), исполком (= գործկոմ), политбюро (= քաղբյուրո) և այլն»⁴։

Բառակազմության այդ որակապես նոր տեսակով ռուսաց լեզուն սկզբնաղբյուր և ուղեցույց է ծառայել նաև հայոց լեզվի համար։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց ի վեր, շուրջ 60 տարիների ընթացքում, հապավումների իր ողջ համակարգով այն մեծապես ազդել է հայերենի վրա, դարձել հայերեն հապավումների ստեղծման ու զարգացման հիմնակետը։

Հանրահայտ փաստ է, որ հապավման, իբրև բառակազմական միանգամայն նոր երևույթի, տեխնիկան⁵ ծնունդ է առել ռուսերենում և այդտեղից փոխանցվել հայերենին։ Իսկ դա, բնականաբար, առաջ է բերել մեծ ընդհանրություններ մեկի ու մյուսի հապավումների միջև։ Հայերենի և ռուսերենի հապավումները ընդհանրաբար են ամենից առաջ իրենց կազմության տեսակներով ու ձևերով։

Նախապես հենց ռուսերենում են բառակապակցություններից կամ բաղադրյալ անվանումներից բաղադրիչների հապավման հիմունքով ստեղծվել թե՛ վանկա-բառային, թե՛ վանկային և թե՛ տառային հապավումները⁶։ Ըստ որում, ռուսերենում ևս առավել բեղուն են վանկա-բառային հապավումները, որոնք և բառային-բառույթային ավելի մեծ արժեք են ներկայացնում, ինչպես, օրինակ՝ агитпропотдел, агитпункт, агрорайон, артогонь, автотоклуб, ветпомощь, госграница, детдом, женотдел, жилплощадь, зарплата, информбюро, квартплата, комсостав, компартия, конармия, медсестра, нарсуд, партбюро, политработа, сельсовет, техпомощь, химслужба և այլն։

Բազմաթիվ բառեր են կազմվում նաև բառակապակցության կամ բաղադրյալ անվանման բոլոր բաղադրիչները անխտիր հապավման ենթարկվելու ճանապարհով։ Նման հապավումներից են, օրինակ, агитпром, Армгоспиздат, военксм, всенторг, главбух, горисполком, домком, Ергорком,

⁴ В. В. Виноградов, Великий русский язык, М., 1945, стр. 166—167.

⁵ Այս դեպքում նկատի ունենք հիմնականում վանկա-բառային և վանկային հապավումները։

⁶ Ռուս լեզվաբանական գրականության մեծ հապավումների տեսակների դասակարգման ու դրանց անվանումների հարցում միասնական մոտեցում գոյություն չունի. ոմանք եթե ընդունում են վանկային (слоговой), ոմանք՝ հնչյունային (звуковой), տառային (буквенный) և խառն (смешанный), ոմանք՝ վանկային (слоговой), սկզբնատառային (инициальный), խառն (смешанный) տեսակի հապավումներ, ապա ոմանք անվանումներից մասամբ կամ լրիվ հրաժարվելով՝ բավարարվում են նրանց կազմության ձևերը նշելով (այս վերջինի մասին տե՛ս В. Ф. Алтайская, Сложносокращенные слова в русском языке, «Научные записки Ужгородского государственного университета», Львов, 1955, стр. 153; «Большая Советская Энциклопедия», т. 23, М., 1976, стр. 575 և այլն)։

завмаг, завхоз, истмат, колхоз, комдив, комсомол, крайком, леспромхоз, ликбез, литфак, местком, минздрав, минместпром, Мосгорсовнархоз, парком, начсанарм, обком, облкомхоз, парторг, помкомбриг, профз, рабкор, универмаг, физрук, хозмаг, юриздат և այլն:

Հայերենի համեմատությանը ռուսերենում բավական լայն գործածություն ունեն տառային հապավումները⁷, ինչպես՝ ААССР (а-а-эс-эс-эр) — Абхазская Автономная Советская Социалистическая Республика, АТХ (а-тэ-ха) — автотранспортное хозяйство, БГТО (бэ-гэ-тэ-о) — «Будь готов к труду и обороне», ВАК (вак) — Высшая аттестационная комиссия, ВВС (вэ-вэ-эс) — военно-воздушные силы, ВДНХ (вэ-дэ-эн-ха) — Выставка достижений народного хозяйства СССР, ГУМ (гум) — Государственный универсальный магазин, ДУ (дэ-у) — дистанционное управление, ЖЭК (жек) — жилищно-эксплуатационная контора, КИМ (ким) — Коммунистический Интернационал Молодежи, ЛКСМ (эл-ка-эс-эм) — Ленинский Коммунистический Союз Молодежи, МГУ (эм-гэ-у) — Московский государственный университет, МИД (мид) — Министерство иностранных дел, НТЧ (эн-тэ-че) — научно-техническая часть, ОРС (орс) — отдел рабочего снабжения, ПОРП (порп) — Польская объединенная рабочая партия, РНР (эр-эн-эр) — Румынская Народная Республика, СУ (су) — строительное управление, ТЭС (тэс) — Тепловая электрическая станция, ХМИ (хми) — Харьковский медицинский институт, ЦК (це-ка) — Центральный Комитет, ЦСУ (це-сэ-у կամ це-эс-у) — Центральное статистическое управление, ЧП (че-пэ) — чрезвычайное происшествие, այլև՝ АрмФАН (армфан) — Армянский филиал Академии наук СССР, БелВО (белво) — Белорусский военный округ, гороно (гороно) — городской отдел народного образования, Комвуз — Коммунистическое высшее учебное заведение, райпо — Районное потребительское общество, Грузинская ССР, Молдавская ССР, ИМЛИ (имли) — Институт мировой литературы, ЦДРИ (це-дри) — Центральный дом работников искусств СССР և այլն, և այլն⁸: Բերված այս բազմաշատ օրինակները նույնպես ցույց են տալիս, որ իրենց կազմության տեսակներով ու բնույթով ռուսերենի և հայերենի հապավումները, իրոք, համընկնում են և միանման համակարգ ներկայացնում: Ըստ որում, ինչպես հայերենում, այնպես էլ ռուսերենում հապավման տեսակները տարբեր ոճերում ու ժանրերում տարբեր լափ ու քանակով են գործածվում: Մամուլի լեզվում, օրինակ, խիստ գերիշխում են ռուսերենի տառային և, ընդհակառակն, պակաս գործածություն ունեն վանկա-բառային և վանկային հապավումները⁹: Իբրև ապացույց, նշենք, որ «Правда» թերթի 6 էջանոց մի համարում (22.12.1973, № 356)

⁷ Ռուս լեզվաբանները սովորաբար տառերի անվանումներով արտաբերվող հապավումները կոչում են տառային (օրինակ՝ ЦК=Це-ка), իսկ մյուսները՝ նշանային (օրինակ՝ ВУЗ=в+у+з) հապավումներ:

⁸ Ռուսերենի տառա-նշանային (օրինակ՝ ЦДСА—це-дэ-са, ЦДРИ—це-дри), վանկա-նշանային (օրինակ՝ гороно), նշանա-վանկային (օրինակ՝ ИМЛИ) և այլն կարգի հապավումները ևս տառային հապավման տարատեսակներ դիտելով՝ ներկայացնում ենք բուն տառային հապավումների հետ միասին:

⁹ Հայերենում, մամուլի լեզվում, տառային հապավումները քանակապես դիչում են ինչպես վանկա-բառային, այնպես էլ վանկային հապավումներին:

գործածված 90 հապավումներից միայն 60-ը՝ տառային, իսկ մնացած 30-ը՝ վանկա-բառային և վանկային հապավումներ են, հմմտ. АН СССР, ВЛКСМ, ВСМ, ВНР, ВВС, ВСРП, ВЦСПС, вуз, ГЭС, ГРЭС, ГДР, ДРВ, ЕЭС, КПСС, КПЧ, КП, МИД, МГК, МНР, НРБ, ООН, РСФСР, СЭВ, ПНР, ЦК, ЧССР, ТЭС, ФПК, ФРГ, ЭВМ, Узбекская ССР, КамАЗ, Калмыцкая АССР..., запчасти, компартия, Моссовет, парторганизация, хозрасчет..., горком, исполком, колхоз, обком, селькор, совхоз և այլն: Ծիշտ այդպես «Известия» թերթի 4 էջանոց մի համարում (6. 4. 77, № 80) եթե 20 վանկա-բառային և 12 վանկային, ապա 40 տառային հապավումներ են գործածվել, հմմտ. автозавод, Госплан, детсад, зооветслужба, запчасти, компартия, профсоюз, стройматериалы, химчистка..., исполком, комсомол, лесхоз, райком, партком..., АПН, АРЕ, ВСРП, ВЦСПС, ВЛКСМ, ГДР, КПСС, МНР, НАТО, ООН, ПНР, РСФСР, США, ЮАР և այլն¹⁰: Պատկերը, մինչդեռ բոլորովին այլ է, ասենք, ռազմական գրականության լեզվում: Մարշալ Գ. Ժուկովի «Воспоминания и размышления» գրքի առաջին հատորում, օրինակ, գործածված ենք տեսնում շուրջ 150 հապավում, որոնցից՝

ա) վանկա-բառային են ավելի քան 70-ը, ինչպես՝ автотранспорт (199), артподготовка (400), Балфлот (318), военсовет (164), горсовет (98), Генштаб (164), госконтроль (324), зарплата (31), кавбригада (73), кавкорпус (102), кавполк (137), комсостав (158), компартия (301), мобплан (105), мехполк (145), мехчасть (276), мотодивизия (190), медработник (398), начгенштаб (145), начсостав (122), начштаба (105), оперштаб (72), оргбюро (322), Реввоенсовет (55), разведорган (341), партбюро (108), парткомиссия (184), политотдел (100), политработа (63), продотряд (62), политуправление (189), погранотряд (274), укрепрайон (219), химслужба (130), экономсовет (216) և այլն¹¹:

բ) վանկային են ավելի քան 30-ը, ինչպես՝ военспец (63), военкомат (66), главком (319), главуправформ (338), горисполком (397), горком (300), Донбасс (67), завхоз (104), комхоз (14), комдив (84), комкор (146), командарм (103), комбриг (148), комсомол (157), наркомат (73), нарком (207), начштабдив (130), обком (300), облисполком (397), райком (239), парторг (213), политрук (75), полпредстав (219), помкомкор (290), Совнарком (239) և այլն:

գ) Տառային են մոտ 50-ը, ինչպես՝ ВЦИК (50), ВВС (128), вуз (158), ВКП(б) (213), ВЧ (265), ВНОС (265), ВЦСПС (304), ВЛКСМ (304), ВГК (333), ГКО (315), дот (236), дзот (237), ККУКС (= Кавалерийские курсы усовершенствования командного состава — 109), КП (165), КВЖД (= Китайско-Восточная железная дорога — 192), КОВО (282), МНР (164), МНРА (= Монгольская народно-революционная армия — 186), НКВД (245), РККА (119), РКП(б) (48), РВСР (= революционный военный совет республики — 18), РВС (112), РГК (221), РСФСР (294), ПВО (127), США (49), СНК (92), СССР (195), ЦК (54), ЦДКА

¹⁰ Այս և նախորդ դեպքում, հասկանալի է, հաշվի չեն առնված հապավումների հաճախական գործածությունները:

¹¹ Նման դեպքերում նույնպես հաշվի չեն առնված հապավումների հաճախականությունները, և փակագծերում էջով նշվում է նրանցից յուրաքանչյուրի մեկ գործածությունը:

(10), ЦАТИ (= Центральный аэрогидродинамический институт — 112), УРы (= укрепленные районы—209), ЮЗФ (= Юго-западный фронт—381)..., ալլա՝ ЗабВО (= Забайкальский военный округ — 191), ОдВО (= Одесский военный округ — 282), КиУР (= Киевский УР — 380), Татарская АССР (210), Литовская ССР (325), Эстонская ССР (394) և այլն¹²։

Անշուշտ, հապավման տեսակները տարբեր չափով են գործածվում նաև բաղադրական, գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական և այլն գրականության լեզվում։ Սակայն, կանգ չառնելով այս և նման այլ հարցերի վրա, հարկ ենք համարում այստեղ ուղղակի նշել, որ հապավման տեսակների նշված տեսակներով փոխանցվելով հայերենին՝ ընդհանրություններ է առաջ բերել նաև հապավմանների բաղադրիչների միջև։ Ըստ այդմ էլ հայերենում իրոք կան ծագումով փոխառյալ բնույթի մի շարք բաղադրիչներ, որոնք և, իբրև այդպիսիք, բնականաբար, իրենց համապատասխան ձևերն ունեն ռուսերենում, հմմտ։

авто — (автомобильный)	ավտո—(ավտոմոբիլային)
агит — (агитационный)	ագիտ—(ագիտացիոն, ագիտացիայի)
агро — (агрономический)	ագրո—(ագրոնոմիական)
батрак — (батрацкий)	*բատրակ—(բատրակային)
диа — (диалектический)	դիա—(դիալեկտիկական)
див — (дивизии)	դիվ—(դիվիզիայի)
драм — (драматический)	դրամ—(դրամատիկական)
информ — (информационный)	ինֆորմ—(ինֆորմացիոն)
кол — (коллективный)	կոլ—(կոլեկտիվ, կոլեկտիվի)
ком I — (коммунальный)	կոմ I—(կոմունալ)
ком II — (коммунистический)	կոմ II—(կոմունիստական)
кооп — (кооперативный, кооператив)	կոոպ—(կոոպերատիվ, կոոպերատիվի)
культ — (культурный)	կուլտ—(կուլտուրայի, կուլտուրական)
лик — (ликвидация)	լիկ—(լիկվիդացիայի, լիկվիդացիոն)
метод — (методический)	մեթոդ—(մեթոդական, մեթոդիկայի)
мех — (механический)	մեխ—(մեխանիկական)
мото I — (моторизованный)	մոտո I—(մոտորացված)
мото II — (мотоциклетный)	մոտո II—(մոտոցիկլետային)
мульти — (мультипликационный)	մուլտ—(մուլտիպլիկացիոն)
парт — (партийный)	*պարտ—(պարտիայի, պարտիական)
пионер — (пионерский)	պիոներ—(պիոներական)

¹² Г. К. Жуков, Воспоминания и размышления, т. 1, М., 1974. Այդ գրքում վանկա-բառային հապավումները քանակով գերազանցում են տառային և վանկային, իսկ տառային հապավումներն էլ՝ վանկային հապավումներին. ի դեպ, վանկա-բառային հապավումները գերակշիռ թիվ են կազմում նաև գեներալ-գնդապետ Վ. Մ. Շատիրովի «Знамя над рейхстагом» գրքում (М., 1975), ինչպես, օրինակ՝ артподготовка (129), артгруппа (68), артудар (103), арtpолк (204), военврач (134), комсостав (115), кавкорпус (170), медслужба (231), политчасть (317), разведвзвод (301), опергруппа (291), химрота (265) և այլն։

план — (плановый)	պլան — (պլանային)
полиграф — (полиграфический)	պոլիգրաֆ — (պոլիգրաֆիական)
пролет — (пролетарский)	պրոլետ — (պրոլետարական)
проф — (профессиональный)	պրոֆ — (պրոֆեսիոնալ)
рай — (районный)	*ռայ — (ռայոնի, ռայոնական)
рев — (революционный)	*ռև — (ռևոլյուցիոն)
сан — (санитарный)	սան — (սանիտարական)
сов — (советский)	սով — (սովետական)
соц I — (социалистический)	սոց I — (սոցիալիստական)
соц II — (социальный)	սոց II — (սոցիալական)
спорт — (спортивный)	սպորտ — (սպորտային)
тех — (технический)	տեխ — (տեխնիկական)
транс — (транспортный)	տրանս — (տրանսպորտային, տրանսպորտի)
троп, тропик — (тропический, тропик)	*տրոպիկ — (տրոպիկ, տրոպիկական)
тур — (туристический)	տուր — (տուրիստական)
фаб — (фабричный)	ֆաբ — (ֆաբրիկայի, ֆաբրիկային)
физ — (физический)	ֆիզ — (ֆիզիկական)
фин — (финансовый)	ֆին — (ֆինանսական, ֆինանսների)
хим — (химический)	քիմ — (քիմիական)
цем — (цементный)	ցեմ — (ցեմենտի)
цех — (цеховой)	*ցեխ — (ցեխի, ցեխային)
шахт — (шахтный)	*շախտ — (շախտի)
шеф — (шефский)	շեֆ — (շեֆական)
эл — (электрический)	էլ — (էլեկտրական)
эпид — (эпидемиологический)	էպիդ — (էպիդեմիոլոգիական) ¹³

Հապավյալ բարդություններում գործածվող բաղադրիչներից¹⁴ բացի, հայերենն ունի նաև փոխառյալ բնույթի վերջադաս բաղադրիչներ, որոնք, բնականաբար, հանդես են գալիս վանկային հապավումների կազմում, հմմտ.

...интерн (интернационал)	...ինտերն (ինտերնացիոնալ)
...кол (коллегия)	...կոլ (կոլեգիա)
...ком I (комиссар)	...կոմ I (կոմիսար)
...ком II (комитет)	...կոմ II (կոմիտե)
...ком III (коммунар)	...կոմ III (կոմունար)
...комат (комиссариат)	...կոմատ (կոմիսարիատ)
...кооп (кооператив, кооперация)	...կոոպ (կոոպերատիվ, կոոպերացիա)
...мат (материализм)	...մատ (մատերիալիզմ)
...транс (транспорт)	...տրանս (տրանսպորտ)
...фак (факультет)	...ֆակ (ֆակուլտետ)

¹³ Աստղանիշ կրող բաղադրիչներով ներկայումս հապավումներ չեն կազմվում:

¹⁴ Վանկա-բառային և վանկային հապավումների նախադաս բաղադրիչների մոտ քառորդ մասը փոխառյալ ծագում ունի:

Փոխառյալ բնույթի այդ՝ ինչպես նախադաս, այնպես էլ վերջադաս բաղադրիչներով հայերենի վանկա-բառային և վանկային հապավումները ավելի մեծ ընդհանրություններ են երևան հանում ռուսերենի համապատասխան հապավումների նկատմամբ և միաժամանակ ցույց տալիս, որ ձևաբանական ու կառուցվածքային տեսակետից ևս սերտ կապեր ու ընդհանրություններ գոյություն ունեն նրանց միջև։ Այսպես, հայերենում՝

ա) Կան հապավումներ, որոնք կազմված են զուտ փոխառյալ բնույթի բաղադրիչներից, հմմտ. ագիտակտիվ—агитактив, ագիտբրիգադ(ա)—агитбригада, ագրոբազա—агробаза, ավտոտրանսպորտ—автотранспорт, ինֆորմբյուրո—информбюро, կոմբանկ—комбанк, կուլտֆոնդ—культурфонд, մեթոդկաբինետ—методкабинет, պոլիգրաֆկոմբինատ—полиграфкомбинат, ֆիզկուլտուրա—физкультура, ագրոֆակ—агрофак, ավտոտրանս—автотранс, դիամատ—диамат, կոմիցտերն—коминтерн, ֆաբկոմ—фабком և այլն¹⁵։

բ) Կան հապավումներ, որոնք կազմված են փոխառյալ բնույթի ու բուն հայկական բաղադրիչներից, հմմտ. ագիտխմբակ—агиткружок, ագիտկետ—агитпункт, ագրոշրջան—агрораён, ավտոգործարան—автозавод, դրամխումբ—драмкружок, լիկկայան—ликбез, կուլայմանագիր—колдоговор, կոմբշիշ—комячейка, կուլտաշխատանք—культурбота, պիոներմամբար—пионерлагерь, պրոֆմիություն—профсоюз, սոցմրցություն—соцсоревнование, սպորտդահլիճ—спортзал, կոմկուս—компартия, կոոպառ—коопторг, սոցապ—соцстрах, ֆիզդեկ—физрук, ֆաբգործու—фабзавуч և այլն։

գ) Կան հապավումներ, որոնք կազմված են բուն հայերեն և փոխառյալ բնույթի բաղադրիչներից, հմմտ. տրդկոմբինատ—промкомбинат, բուժինստիտուտ—мединститут, գյուղսովետ—сельсовет, կազմկոմիտե—оргкомитет, պետբանկ—госбанк, Պետպլան—Госплан, քաղբյուրո—политбюро... աշկոմ—учком, բանֆակ—рабфак, գործկոմ—исполком, ժողկոմ—нарком, խմբկոմ—редколлегия, մարզկոմ—обком, պատմատ—истмат, քաղկոմ—горком և այլն։

դ) Կան հապավումներ, որոնք կազմված են զուտ հայերեն բաղադրիչներից, հմմտ. անտառտնտեսություն—лесхоз, աշխարհապահություն—труддисциплина, առբաժին—здравотдел, բանթղթակից—рабкор, բնակվարձ—квартплата, ժողդատարան—нарсуд, խնայդրամարկդ—сберкасса, կինբաժին—женотдел, պետանվտանգություն—госбезопасность, քաղաշխատանք—политработа..., աշխդեկ—прораб, զինառ—военторг, զինդեկ—военрук, պետապ—госстрах, պետհրատ—госиздат, քաղդեկ—политрук և այլն։

Հապավման այդ տարատեսակները հայերենում, անշուշտ, առաջ են եկել ռուսաց լեզվի ազդեցությամբ՝ մեծ մասամբ բառապատճենման կամ թարգմանություն ճանապարհով։ Բայց ռուսերենից, իբրև սկզբնաղբյուր լեզվից, նույնությամբ հայերենին են անցել նաև որոշ վանկա-բառային (լիտֆոնդ, մուգֆոնդ, այլն՝ «Մուգֆիլմ», «Լենֆիլմ»), վանկային (կուլտոգ, կոմսոմոլ, սովխոգ, ունիվերսալ և այլն) և համեմատաբար ավելի շատ տառային հա-

¹⁵ Այս և մյուս դեպքերում համեմատության համար բերվում են նախ՝ վանկա-բառային և ապա՝ վանկային հապավման օրինակներ։

պավումներ: Պատճենմամբ կամ թարգմանությունամբ ստեղծված տառային հապավումներից բացի (հմտ. ԱՄՆ—США, ՍՄԿ—КПСС, ՄՏԿ—МТС, բուհ—вуз, ՄԱԿ—ООН, ՊՇԷԿ—ГРЭС, ԳԴՀ—ГДР և այլն) հայերենում գործածվում են նաև ռուսերենից անմիջապես ու նրա միջոցով այլ լեզուներից փոխառնված մի շարք հապավումներ, հմտ. ԱՊՆ—АПН (агентство печати „Новости“), ԴՕՍՍԱՖ—ДОСААФ [(Всесоюзное) добровольное общество содействия армии, авиации и флоту СССР], ԳՈՔԼՈՈ—ГОЭЛРО (Государственная комиссия по электрификации России), ԳԷՍ—ГЭС (Гидроэлектростанция), ԶԱԳՍ//զագս—ЗАГС//загс—(Запись актов гражданского состояния), ՆԷպ—Нэп (Новая экономическая политика), ԿԻՄ—КИМ (Коммунистический Интернационал Молодежи), ԴԶՕՏ—дзот (Дерево-земляная огневая точка), ՏԱՍՍ—ТАСС (Телеграфное агентство Советского Союза)..., ՄԴՆ—АДН (<գերմ. ADN | Allgemeiner Deutscher Nachrichtendienst (Համագերմանական հեռագրական գործակալություն), ԴՊԱ—ДПА (<գերմ. DPA—Deutsche Presse—Agentur=ՖԴՀ-ի հեռագրական գործակալություն), ՅՈՒՆԵՍԿՕ—ЮНЕСКО (<անգլ. UNESCO—United Nations Educational, Scientific and Cultural Organization=Կրթության, գիտության և կուլտուրայի հարցերի գծով միավորված ազգերի կազմակերպություն), ՆԱՏՕ—НАТО—(<անգլ. NATO—North Atlantic Treaty Organization=Հյուսիս-Ատլանտյան դաշնագրային կազմակերպություն), ՍԵԱՏՕ—СЕАТО (<անգլ. SEATO—South-East Asia Treaty Organization=Հարավ-Արևելյան Ասիայի դաշնագրային միություն), ՈՒԵՖԱ—УЕФА (<ֆր. UEFA—Union des Associations Européennes de Football=Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միություն), ՖԻԴԵ—ФИДЕ (<ֆր. FIDE—Fédération Internationale des Echecs=Շախմատի միջազգային ֆեդերացիա) և այլն¹⁸:

Այս և նման այլ ընդհանրություններից ելնելով, չպետք է, սակայն, եզրակացնել կամ այն տպավորությունն ստանալ, թե հայերենը կուրորեն որդեգրել է ռուսերենի հապավումները, կամ թե չէ՝ հայերենի հապավումները դրանց պարզ լուսապատճենումն են. ամենևին՝ Որոշակի ու ակնհայտ ընդհանրություններով հանդերձ ռուսերենի և հայերենի հապավումները միաժամանակ տարբերվում են նաև իրարից. առաջին կարևոր ու էական տարբերությունն այն է, որ երկու լեզուներից լուրաքանչյուրն իր հապավումները (վանկա-բառային, վանկային-տառային) կազմում է իր իսկ սեփական բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների հիման վրա՝ նրանց բաղադրիչների հապավման հիմունքով, հմտ. կոմունիստական կուսակցություն>կոմկուսակցություն—коммунистическая партия>компартия, պետական ավտոմոբիլային տեսչություն>պետավտոտեսչություն—государственная автомобильная инспекция>госавтоинспекция, սոցիալիստական մրցույթ>սոցմրցություն—социалистическое соревнование>соцсоревнование..., շրջանային կոմիտե>շրջկոմ—районный комитет>райком, քաղաքային գործադիր կոմիտե>քաղգործկոմ—городской исполнительный комитет>горисполком, Սովետական Սոցիալիստական Հանրապետու-

¹⁸ Դրանց մասին տե՛ս մեր «Տառային հապավումները հայոց լեզվում» հոդվածը (սլաւոն-լեզուն և գրականությունը դպրոցում, Երևան, 1976, № 6)։

Թյունների Միութիւն>ՍՍՀՄ—Союз Советских Социалистических Республик>СССР, Միավորված ազգերի կազմակերպութիւն>ՄԱԿ—Организация Объединенных Наций—ООН, Տնտեսական փոխօգնութիւն խորհուրդ>ՏՓԽ—Совет экономической взаимопомощи>СЭВ և այլն: Իսկ դա նշանակում է, որ ռուսերենն ու հայերենը հավասարապես ունեն հապավումների իրենց բուն համակարգը, որը և համապատասխանում է նրանցից յուրաքանչյուրի քերականական կառուցվածքին և պայմանավորվում նրանց ներքին օրենքներով ու օրինաչափութիւններով: Այդ պատճառով՝ երկու լեզուներում հապավումները բնավ հավասարազոր ու հավասարակշիռ չեն և ոչ էլ բոլոր դեպքերում ճիշտ միատեսակ պատկեր են ներկայացնում: Ընդհանուր շատ ձևերից զատ, ռուսերենի բազմաթիւ հապավումներ հայերենում արտահայտվում են.

ա) բառակապակցութեամբ, հմմտ.

генштаб (генеральный штаб)	--գլխավոր շտաբ
главврач (главный врач)	--գլխավոր բժիշկ
госграница (государственная граница)	--պետական սահման
стенгазета (стенная газета)	--պատի թերթ
главбух (главный бухгалтер)	--գլխավոր հաշվապահ
командарм (командир армии)	--բանակի հրամանատար
краском (красный командир)	--կարմիր հրամանատար
ВВС (Военно-воздушные силы)	--ուղիւղ-օդային ուժեր
ГКО (Государственный комитет обороны)	--պաշտպանութեան պետական կոմիտե
МИД (Министерство иностранных дел)	--արտաքին գործերի մինիստրութիւն:

բ) իսկական բաղադրութեամբ, հմմտ.

детдом (детский дом)	--մանկատուն
детсад (детский сад)	--մանկապարտեզ
дензнак (денежный знак)	--դրամանիշ
зарплата (заработная плата)	--աշխատավարձ
роддом (родильный дом)	--ծննդատուն
линкор (линейный корабль)	--գծանավ
НП (наблюдательный пункт)	--դիտակետ և այլն:

գ) տարբեր տեսակի հապավումներով, հմմտ.

лесхоз (лесное хозяйство)	--անտառտնտեսութիւն
селькор (сельский корреспондент)	--գյուղթղթակից
редколлегия (редакционная коллегия)	--խմբակ
ЦК (Центральный комитет)	--Կենտկոմ
ОНО (Отдел народного образования)	--Ժողկրթբաժին:

Ավելորդ չենք համարում հապավումների տարբեր արտահայտված են հայավմամբ, 15-ը՝ բառակապակցությամբ, հմմտ. партбюро (33) — կուսբյուրո (39), сельсовет (34) — գյուղսովետ (40), Совинформбюро (194) — Սովինֆորմբյուրո (174), компартия (209) — կոմկուսակցություն (194), полит-орган (209) — քաղմարմին (193), политуправление (209—210) — քաղվարչություն (194—195), мехбригада (439) — մեքբրիգադ (481)..., Генштаб (17) — գլխավոր շտաբ (21), химдело (8) — քիմիական գործ (7), погранотряд (13) — սահմանապահ շոկատ (16), мехкорпус (23) — մեքենացված կորպուս (29), артогонь (283) — հրետանային կրակ (281), разгранлиния (400) — սահմանորոշ գիծ (431), укрепрайон (413) — ամրացված շրջան (448), машбюро (459) — մեքենագրական բյուրո (509) և այլն:

ա) 25 վանկա-բառային հապավումներից 10-ը արտահայտված են հայավմամբ, 15-ը՝ բառակապակցությամբ, հմմտ. нарком (11) — ժողկոմ (13), Совнарком (24) — ժողկոմսովետ (31), наркомат (28) — ժողկոմատ (33), райисполком (34) — շրջգործկոմ (40), обком (209) — մարզկոմ (194)..., комбриг (16) — բրիգադի հրամանատար (20), комдив (11) — դիվիզիայի հրամանատար (18), командарм (146) — բանակի հրամանատար (140), Главноком (427) — գլխավոր հրամանատար (466) — крайком (209) — երկրամասային կոմիտե (194)..., այլև՝ замнарком (6) — ժողկոմի տեղակալ (6), женорг (36) — կինբաժնի կազմակերպիչ (41) և այլն:

բ) 20 վանկային հապավումներից 8-ը արտահայտված են վանկային, իսկ մնացած 12-ը՝ բառակապակցությամբ, հմմտ. нарком (11) — ժողկոմ (13), Совнарком (24) — ժողկոմսովետ (31), наркомат (28) — ժողկոմատ (33), райисполком (34) — շրջգործկոմ (40), обком (209) — մարզկոմ (194)..., комбриг (16) — բրիգադի հրամանատար (20), комдив (11) — դիվիզիայի հրամանատար (18), командарм (146) — բանակի հրամանատար (140), Главноком (427) — գլխավոր հրամանատար (466) — крайком (209) — երկրամասային կոմիտե (194)..., այլև՝ замнарком (6) — ժողկոմի տեղակալ (6), женорг (36) — կինբաժնի կազմակերպիչ (41) և այլն:

գ) 24 տառային հապավումներից 12-ը արտահայտված են տառային և 1-ը՝ վանկային հապավմամբ, 10-ը՝ բառակապակցությամբ, 1-ն էլ՝ իսկական բարդությամբ, հմմտ. РККА (5) — ԽԿԿԲ (5), СССР (8) — ՍՍՀՄ (9), ПВО (31) — ՀՕՊ (37), ДОТ (150) — դոտ (117), СС (160) — ՍՍ (128), США (191) — ԱՄՆ (100), МНР (412) — ՄԺՀ (147), ВКП (6) — ՀամԿ(բ) (179—154), РГК (5) — Գլխավոր հրամանատարության ռեզերվ, САВО (20) — Միջին Ասիական զինվորական օկրուգ (25), ГКО (37) — պաշտպանության պետական կոմիտե (43), ВОСО (189) — ռազմական հաղորդակցությունների ծառայություն (168), МК (194) — Մոսկվայի կոմիտե (174), ИПТАП (222) — կործանիչ-հակատանկային հրետանային գունդ (210)..., НР (12) — դիտակետ (15), ЦК (31) — Կենտկոմ (36)¹⁸:

Սրանք այնպիսի փաստեր են, որոնք հաստատում են հայերեն և ռուսերեն հապավումների միջև առկա զգալի տարբերությունները, որոնք իսկապես պայմանավորվում են դրանցից յուրաքանչյուրի քերականական կառուցվածքի, բառակազմության բնույթով ու առանձնահատկություններով: Այդ

¹⁷ См. С. М. Штеменко, Генеральный штаб в годы войны, кн. первая, М., 1975. և դրա հայերեն թարգմանությունը՝ Ս. Մ. Շտեմենկո, Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, Երևան, 1970:

¹⁸ Դժվար չէ նկատել, որ Ս. Շտեմենկոյի գործածած 69 հապավումներից 27-ը հայերեն թարգմանության մեջ բառակապակցությամբ են արտահայտված:

ամենին համապատասխան ռուսերենն ու հայերենը իրարից տարբերվում են նաև հապավումների և, բնականաբար, դրանց սկզբնատիպ բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների բաղադրիչների հաջորդական կարգի՝ շարադասության տեսակետից. ռուսերենում, դրա իսկ օրենքներով ու օրինաչափություններով պայմանավորված, հապավումների և համապատասխան սկզբնատիպ ձևերի կազմում գլխավոր, առանցքային կամ գերադաս անդամը կարող է լինել.

ա) Եախադաս, հմմտ.

- | | |
|--|--|
| 1. завкафедрой (заведующий кафедрой) | — ամբիոնի վարիչ |
| замдиректора (заместитель директора) | — դիրեկտորի տեղակալ |
| комполка (командир полка) | — փոքրի հրամանատար |
| начштаба (начальник штаба) | — շտաբի պետ |
| помкомвзвода (помощник командира взвода) | — դասակի հրամանատարի օգնական |
| предсельсовета (председатель сельского совета) | — գյուղսովետի նախագահ ¹⁹ |
| 2. завмаг (заведующий магазином) | — խանութի վարիչ |
| завуч (заведующий учебной частью) | — ուսմասվար (ուսումնական մասի վարիչ) |
| замзав (заместитель заведующего) | — վարիչի տեղակալ |
| комбат (командир батальона) | — գումարտակի հրամանատար |
| начдив (начальник дивизии) | — դիվիզիայի պետ |
| помкомбриг (помощник командира бригады) | — բրիգադի հրամանատարի օգնական |
| предзавком (председатель заводского комитета) | — գործարկումի նախագահ ¹⁹ |
| совнархоз (Совет народного хозяйства) | — ժողտնտխորհ |
| 3. АН (Академия наук) | — ԳԱ (< դիտությունների ակադեմիա) |
| ДКЖ (Дом культуры железнодорожников) | — երկաթուղայինների կուլտուրայի տուն |
| МИД (Министерство иностранных дел) | — արտգործմինիստրություն |
| СССР (Союз Советских Социалистических Республик) | — ՍՍՀՄ (< Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն) |
| ООН (Организация Объединенных Наций) | — ՄԱԿ (Միավորված ազգերի կազմակերպություն) |

¹⁹ Ռուսերենի սեռական և գործիական հոլովով վերջնաբաղադրիչ ունեցող հապավումները չեն հոլովվում:

բ) Միջադաս, հմմտ.

1. Губкомол (Губернский комитет — ՀամԿԵՄ նահանգային կոմիտե
Всесоюзного Ленинского Ком-
мунистического Союза Моло-
дежи)
Комсомол (Коммунистический — կոմերիտմիություն
Союз Молодежи)
Наркомпрос (Народный комис- — լուսժողովատ
сариат просвещения)
Наркомзем (Народный комис- — հողժողովատ:
сариат земледелия)
2. ВЦСПС (Всесоюзный цент- — ՀԱՄԿ
ральный совет профессио-
нальных союзов)
КЛСС (Коммунистическая пар- — ՍՄԿԿ
тия Советского Союза)
НРБ (Народная Республика — ԲԺՀ
Болгарии)
ТАСС (Телеграфное агентство — ՏԱՍՍ
Советского Союза)
ЦСКА (Центральный спортив- — ԲԿՍԱ.
ный клуб армии)

գ) Վերջադաս, հմմտ.

1. Автозавод (автомобильный за- — ավտոգործարան
вод)
госэкзамен (государственный — պետական քննություն
экзамен)
детясли (детские ясли) — մանկամուկ
культпросветработа (культур- — կուլտլուսաշխատանք
но-просветительная работа)
оргкомитет (организационный — կազմկոմիտե
комитет)
политзаклученный (политичес- — քաղքանտարկյալ
кий заключенный)
рабсила (рабочая сила) — բանուժ
2. Военком (военный комиссар) — զինկոմ
горрайком (городской район- — քաղընդհանր
ный комитет)
парторг (партийный организатор) — կուսկազմակերպիչ
рабкор (рабочий корреспондент) — բանթղթակից
физрук (физкультурный руко- — ֆիզգեկ
водитель)
3. ВТУЗ (Высшее техническое — ԲՏՈՒՀ
учебное заведение)

ДСО (Добровольное спортивное общество)	— ԿՄԸ
МНР (Монгольская Народная Республика)	— ՄԺՀ
НИС (Научно-исследовательский сектор)	— գիտահետազոտական բաժին
ЭВМ (Электронно - вычислительная машина)	— էՄՀ և ալյն ²⁰ ,

Այնինչ հայերենում, ի տարբերություն ռուսերենի, հապավումների և համապատասխան բառակապակցությունների (բաղադրյալ անվանումների) գլխավոր, առանցքային կամ գերադաս անդամը հանդես է գալիս նրանց վերջում և բացառապես վերջադաս կիրառություն ունի. դա էլ հենց հայերենի հապավումների ամենաբնորոշ ու էական հատկանիշն է, որ ընկած է նրանց բոլոր տեսակների հիմքում: Հայերենի թե՛ վանկա-բառային, թե՛ վանկային և թե՛ տառային հապավումների կազմում բարդության հիմնական նշանակությունը արտահայտվում է միայն ու միայն վերջին կամ վերջադաս բաղադրիչով²¹, որին և ստորադասվում են նրան նախորդող բաղադրիչը կամ բաղադրիչները²², ինչպես, օրինակ՝ արհմիություն, բուժօժանայություն, գյուղատնտեսություն, էլցանց, ժողովրդագրություն..., աշխղեկ, արհկամ, բանկոռայ, գյուղգործկամ, դասղեկ, պետապ... ԱՄՆ, բուռ, ԴԿՄԸ, ԳԴՀ, ՍՄԿ և ալյն: Այսպիսով, միանգամայն պարզ է, որ հապավման իբրև նորագույն բարդության, եղանակը կամ տեխնիկան, ռուսերենից ժառանգած լինելով՝ հայերենը, սակայն, բոլոր դեպքերում հապավումների իր համակարգը ստեղծել է սեփական բառակապակցության ու բառակազմության, սեփական քերականական կառուցվածքի օրենքներով ու նրանց ճիշտ համապատասխան: Այդ պատճառով հայերենի հապավումները, ըստ էության, չեն տարբերվում նրա մյուս տեսակի բարդություններից, և դրանց պես, անշուշտ, ազգային են ու հայկական: Սրանով, հասկանալի է, չեն ժխտվում ռուսերենի ու հայերենի հապավումների բոլոր, տվյալ դեպքում նաև բաղադրիչների շարադասության տեսակետից նրանց միջև եղած ընդհանրությունները: Բերված օրինակներից իսկ դժվար չէ նկատել, որ ռուսերենի այն հապավումները, որոնց բաղադրիչները որոշիչ-որոշյալի հարաբերություն են արտահայտում, և համապատասխանաբար գլխավոր-առանցքային բաղադրիչը վերջադաս է գործածվում, չեն հակասում հայերենի բառակապակցության օրենքներին և հեշտությամբ ու մեծ մասամբ այդտեղ ևս հապավմամբ են արտահայտվում: Եվ, ընդհանրապես, ռուսերենի այն բազմաքանակ հապավումները, որոնց գերադաս կամ գլխավոր-առանցքային անդամը հանդես է գալիս բարդության սկզբում կամ վերջում, և որոնցում էլ հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունն արտահայտվում է բաղադրիչների հակառակ շարադասությամբ, հայերենի բառա-

²⁰ Ցուրաբանչուր դեպքում համեմատության համար բերված են նախ՝ վանկա-բառային, ապա վանկային և վերջում՝ տառային հապավման օրինակներ:

²¹ Տառային հապավումների համար, հասկանալի է, նկատի ունենք նրանց սկզբնատիպ բառակապակցությունները կամ բաղադրյալ անվանումները:

²² Իբրև բացառություն, հայերենում կան միայն մի քանի հապավումներ (օրինակ՝ Մեծ Մարտ—էնգելս—Լենին—Ստալին), որոնց բաղադրիչներն իրար համագոր են:

կապակցության բուն օրենքներին չհամապատասխանելով՝ հիմնականում բառակապակցությամբ են արտահայտվում: Նշանակում է՝ հապավումները ուսանողներին և հայերենում ընդհանուր լինելով հանդերձ, իրենց քանակական կազմով նույնը չեն և ոչ էլ, ասենք, ուղիղ համեմատական են իրար. ուստի, ինչպես ուսանողների բազմաթիվ հապավումներ շունեն հապավմամբ արտահայտվող իրենց հայերեն համարժեքները, այնպես էլ հայերենում կան հապավումներ, որոնք ուսանողներին են ո՛չ թե հապավմամբ, այլ բառակապակցությամբ են արտահայտվում. այդպիսի հապավումներից են, օրինակ՝ գիտխորհուրդ (=учёный совет), գիտխմբագիր (=научный редактор), գիտկաբինետ (=научный кабинет), գիտաշխատություն (=научный труд), գիտքարտուղար (=учёный секретарь), կուսանդամ (=член партии), պրոֆանդամ (=член профсоюза) և այլն²³:

Այսպիսով, հապավումները երկու լեզուներում՝ ուսանողներին ու հայերենում, ստեղծվում-կազմվում են իրո՞ք հիմնականում նրանց հատուկ օրենքներով և ընձեռած լեզվական միջոցներով: Ըստ որում, երկու դեպքում էլ հապավումների կազմության ժամանակ կարևոր դեր են խաղում նաև նրանց բաղադրիչների կապակցության դուրամատյեկության, բարդության բարենշնչունության և այլ գործոնները: Հայերենի համար այդ իմաստով մեծ դժվարություններ ու խոչընդոտներ են հարուցում ուսանողների հատկապես տառային հապավումները՝ որոնց միայն մի նվազ և այն մասն է հայերենում հապավմամբ արտահայտվում, որը չի հակասում նրա հնչյունակապակցության օրենքներին և առաջ բերում անհեթեթ ձևեր: Բայց, սա, իհարկե, չի նշանակում, թե անցած շուրջ 60 տարիների ընթացքում ուսանողներից՝ թարգմանության կամ պատճենման ճանապարհով հայերենում շինծու ու արհեստական, նրա ոգուն միանգամայն խորթ ու անհաջող հապավումներ չեն կազմվել. ամենեկին: Գրավոր այլևայլ աղբյուրներում, մանավանդ մամուլի էջերում և ուս-հայերեն բառարաններում, տեղ են գտել մի շարք անհաջող հապավումներ, ինչպես՝ բժիշկատու (ՌՀՆԲ, I, 734), ԲԺՕԳ (ն. տ., 483), ԳԱՍ («ԽՀ», 6. II. 1931), գլխգիա (ՌՀՆԲ, I, 339), Գլխով (—главк-глав-ный комитет, ՌՀԲ, 1, 354), գլխեամանատար (ն. տ., 1, 354), գլխով (ՌՀՆԲ, 1, 330), Գլխմաղ («ԽՀ», 20. III. 1926), ԺՊԿ (ՌՀՆԲ, 1, 278), ՄԷՕ (—МЮД, ՌՀԲ, 2, 281) և այլն, որոնք և հասկանալի պատճառներով չեն մերվել հապավումների կազմում և ընդհանուր ճանաչման չեն արժանացել:

Ռուսերենի և հայերենի հապավումների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները այսքանով, անշուշտ, չեն սպառվում: Ստեղծված լինելով սեփական բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների հիմքի վրա՝ սեփական լեզվի օրենքներով, հապավումները, բնականաբար, բնորոշվում են նաև նրան հատուկ քերականական կարգերով ու հատկանիշներով: Ռուսերենում, օրինակ, հապավումները նույնպես օժտված են քերականական սեռով, նրանց մի զգալի մասը (հատկապես տառերի անուններով արտաբերվող տառային հապավումները) չի հոլովվում²⁴, սովորական են բա-

23 Առաջինը այս մասին հիշատակել է Գ. Սևակը (սթամանակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 196), հմտ. նաև Ս. Էլոյան, Հապավումներ (սՀայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973, էջ 147):

24 Ռուսերենում վանկային հապավումները բաղաձայնով վերջանալով՝ հոլովվում են զուտ արական հոլովմամբ:

ռազմապահութեան կամ րազմադրոյալ անվանման բազմաթիւններ սկզբնաւա-
սից եւ սկզբնատառերից եւ կամ, ընդհակառակն, սկզբնաւաւորից եւ սկզբնա-
ւաւորից կազմված ձեւերը եւ այլն: Այդպէս եւ հապավումները հայերենում
դրսւկորում են դրան իսկ բնորոշ հատկանիշներ, ղերծ են քերականական սե-
ռից եւ վերջինիս պատճառած անպատեհութիւններէ, անխախտ հոլովում
են եւ այլն: Այսպիսով՝ պարզ է, որ ռուսերենի եւ հայերենի հապավումները
միջեւ եղած ընդհանրութիւններն ու տարբերութիւնները մի կողմից եթե
նրանց ազգային ընդլայնն ու ինքնատիպութիւնն են հավասարում, ապա մյուս
կողմից ցույց են տալիս, որ հայերենի համար ռուսերենը, իրոք, միշտ եղել է
հապավումների ստեղծման ու հարստացման հիմնական ու կարեւոր աղբյուրը:

Կասկած չի եւրդ, որ ռուսաց լեզուն այսուհետեւ եւ՝ ձեռն ազգա-
յին, ընդհանրակրթյամբ սոցիալիսական կուլուրայի զարգացման ընթաց-
քում կշարունակի մեծապէս նպաստել հայոց լեզվի ինչպէս ընդհանուր բառա-
պաշարի, այնպէս էլ հապավումների հարստացմանն ու զարգացմանը:

РУССКИЙ ЯЗЫК И АРМЯНСКИЕ АББРЕВИАТУРЫ

АЛЕКСАНДР МАРҚАРЯН

Резюме

После Великой Октябрьской социалистической революции в рус-
ском языке возник качественно новый способ словообразования—аббре-
виация, который нашел место и в ряде других языков, в том числе в ар-
мянском.

В армянском языке сформировалась собственная система аббре-
виации, которая во многом схожа с русскими аббревиатурами, но в то
же время отлична от них. Каждый из этих языков строит систему сво-
их аббревиатур в соответствии со своими словообразовательными и
грамматическими закономерностями, на основе словосочетаний, под-
чиняющихся их синтаксическому порядку и правилам. Согласно этому,
а) в русских аббревиатурах главный (стержневой) компонент высту-
пает в начале, в середине или в конце, а в армянских стоит всегда на
последнем месте (ср. прораб—աշղեկ, совнархоз—ժողովարհ, комсо-
мол—կոմերիտական, наркомпрос—ընտրողական, политрук—քաղեկ,
оргкомитет—կազմկոմիտե, ООН—ՄԱԿ, КПСС—ՍՄԿԿ, ЭВМ—էՀՄ). б)
русские сложносокращенные слова в армянском могут выражаться как
аббревиатурами, так и словосочетаниями или другими типами словосло-
жения. И наоборот, в армянском есть сложносокращенные слова, которые
не имеют своих сокращенных форм в русском языке.

Таким образом, русский язык стал источником армянских аббревиа-
тур, он продолжает способствовать их обогащению и в настоящее время.